

ՈՌՈԳՄԱՆ ԶՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՅՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն մեթոդաբանությունը սահմանում է ոռոգման ջրի մաքակարարման ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ) մաքուցող ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին և այլ ջրօգտագործողներին (այսուհետ՝ Սպառողներ) մաքուցվող ծառայությունների սակագնային համակարգի մշակման սկզբունքները:

1. Սակագնային համակարգի մշակման փուլերը

1.1 Սակագնային համակարգի մշակումը իրականացվում է հետևյալ փուլերով՝

- ա) Ընկերության փարեկան անհրաժեշտ հասույթի որոշում,
- բ) ծախսերի վերլուծություն և Սպառողներին ու սպառողական խմբերին մաքուցվող ծառայությունների արժեքի որոշում,
- գ) սակագների կառուցվածքների մշակում:

2. Անհրաժեշտ հասույթի որոշումը

2.1 Սակագների մշակման գործընթացն իրականացնելիս Ընկերությունն առաջնորդվում է անհրաժեշտ փարեկան հասույթի ապահովման սկզբունքով, համաձայն որի անհրաժեշտ հասույթը բավարարում է իրականացնելու Ընկերության հուսալի, անվտանգ և շարունակական գործունեության համար պահանջվող բոլոր գործառնական ծախսերը և ապահովելու ներգրավված կապիտալի դիմաց թույլատրելի (ողջամիտ) շահույթը:

Անհրաժեշտ հասույթը (**ԱՆ**) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ԱՆ} = \text{ԹԾ} + \text{Մ} + \text{ԹՇ} - \text{ԱԵ},$$

որտեղ՝

ԹԾ – թույլատրելի փարեկան ծախսերն են,

Մ – հիմնական միջոցների փարեկան մաշվածության գումարն է,

ԹՇ – թույլատրելի շահույթն է,

ԱԵ - այլ եկամուտներն են:

2.2 Թույլատրելի ծախսերում (**ԹԾ**) ներառվում են սակագների հաշվարկման 12-ամսյա ժամանակաշրջանի (այսուհետ՝ հաշվարկային փարի) ընթացքում

Ծառայություններ մատուցելու համար կապարվող անհրաժեշտ ընթացիկ ծախսերը, այդ թվում՝

ա) շահագործման և պահպանման ծախսերը, ներառյալ՝ աշխատավարձերը, նպաստները, ինչպես նաև ոռոգման համակարգերի շահագործման և ընթացիկ վերանորոգման համար պահանջվող ծախսերը,

բ) հարկերը (բացի շահութահարկից և ավելացված արժեքի հարկից) – Նայասպանի Նանրապետության օրենքով սահմանված փուրքերն ու պարտադիր այլ վճարները,

գ) Նայասպանի Նանրապետության օրենսդրությամբ նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերը,

դ) Նայասպանի Նանրապետության կառավարությունից կամ Նայասպանի Նանրապետության կառավարության երաշխավորմամբ սրացված արտոնյալ վարկերի սպասարկման և մարման հետ կապված ծախսերը:

Ծառայությունների մատուցման հետ չառնչվող ծախսերը չեն ընդգրկվում անհրաժեշտ հասույթի հաշվարկում:

2.3 Նիմնական միջոցների փարեկան մաշվածության (**Մ**) գումարները հաշվարկվում են գծային մեթոդով՝ ելնելով Ծառայությունների մատուցման համար Նայասպանի Նանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Նանձնաժողով) կողմից օգրակար և օգրագործվող ճանաչված հիմնական միջոցների սկզբնական (ձեռքբերման) արժեքից կամ ֆինանսական հաշվետվություններում դրան փոխարինող այլ գումարից և օգրակար ծառայության ժամանակահատվածից:

2.4 Թույլատրելի է համարվում շահույթի (**ԹՇ**) այն մեծությունը, որն Ընկերությանը հնարավորություն է տալիս կատարել ակտիվների ֆինանսավորման համար ներգրավված կապիտալի հետ կապված պարտավորությունները և չխոչընդոտել Ընկերության զարգացման համար անհրաժեշտ լրացուցիչ սեփական կամ փոխառու միջոցների ներգրավումը:

Ընկերության ակտիվների ֆինանսավորման աղբյուրներից, պայմաններից և հնարավորություններից ելնելով՝ թույլատրելի շահույթի որոշման համար օգրագործվում են հետևյալ եղանակները.

ա) գույք ակտիվների շահույթի նորմայի եղանակ,

բ) անհրաժեշտ ֆինանսական ծախսերի հատուցման եղանակ:

2.5 Զույգ ակտիվների շահույթի նորմայի եղանակի կիրառման դեպքում թույլատրելի շահույթը հաշվարկվում է որպես շահույթի հաշվարկման բազայի (**ՇԲ**) – թույլատրելի շահույթի նորմայի (**ՇՆ**) արտադրյալ՝

$$\text{ԹՇ} = \text{ՇԲ} * \text{ՇՆ}:$$

Շահույթի հաշվարկման բազան Ընկերության գույք ակտիվների արժեքն է, որը հաշվարկվում է հետ-յալ բանաձևով՝

$$\text{ՇԲ} = \text{ՕՕՈԸԱ} - \text{ԿՄ} + \text{ՇԿ},$$

որտեղ՝

ՕՕՈԸԱ - Ծառայությունների մատուցման համար Նանձնաժողովի կողմից օգտակար և օգտագործվող ճանաչված ոչ ընթացիկ ակտիվների, այդ թվում՝ հողի, շենքերի, կառուցվածքների և սարքավորումների, մեքենա-մեխանիզմների և այլ նյութական ակտիվների արժեքն է,

ԿՄ - ոչ ընթացիկ ակտիվների կուտակված մաշվածությունն է, որը հաշվարկվում է սույն մեթոդաբանության 2.3 կետով սահմանված մեթոդով:

ՇԿ – շրջանառու կապիտալի՝ Նանձնաժողովի կողմից թույլատրելի համարվող մեծությունն է, որի մեջ մտնում են Ծառայությունների իրականացման գծով Ընկերության ընթացիկ պարտավորությունների կատարման համար պահանջվող կանխիկ միջոցները, նյութերը և պահեստամասերը:

Շահույթի թույլատրելի նորման Ընկերության փոխառու և սեփական կապիտալի միջին արժեքն է՝ հաշվարկված կապիտալի կառուցվածքում նրանց բաժնեմասերին համապատասխան՝

$$\text{ՇՆ} = \frac{U_{\text{Կ}} * r_u + \sum_i \Phi_{\text{Կ}_i} * r_{\Phi_i}}{U_{\text{Կ}} + \sum_i \Phi_{\text{Կ}_i}},$$

որտեղ՝

U_Կ – r_u – համապատասխանաբար սեփական կապիտալի մեծությունն է հաշվարկային փարվա սկզբում և նրա թույլատրելի շահույթի նորման՝ մինչև հարկումը,

Φ_{Կ_i} – r_{Φ_i} – համապատասխանաբար i-րդ փոխառության ջնարված մնացորդն է հաշվարկային փարվա սկզբում – նրա սպասարկման արժեքը:

Այս եղանակի կիրառման դեպքում ներգրավված կապիտալի նկատմամբ պարտավորություններն ամբողջությամբ իրականացվում են շահույթի և մաշվածության գումարների հաշվին: Նանձնաժողովի կողմից հաստատված ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգի պահանջներին համապատասխան կատարված ներդրումները հաշվի են առնվում դրանց իրականացումից հետո՝ շահույթի և մաշվածության բազայում ներառման միջոցով:

2.6 Շահույթի և մաշվածության հաշվարկման բազայում, ինչպես նաև շահույթի թույլատրելի նորմայի հաշվարկում չեն ընդգրկվում այն ներդրումները, որոնք իրականացվում են դրամաշնորհների, Նայաստանի Նանրապետության կառավարությունից կամ Նայաստանի Նանրապետության կառավարության երաշխավորմամբ սրացված արտոնյալ վարկերի հաշվին:

2.7 Անհրաժեշտ ֆինանսական ծախսերի հապուցման եղանակի կիրառման դեպքում թույլատրելի շահույթը հաշվարկվում է՝ հաշվի առնելով Ընկերության փաստացի ֆինանսական պարտավորությունները և սույն մեթոդաբանության 2.2 կետում նշված թույլատրելի ծախսերի կազմում չընդգրկված այն լրացուցիչ ծախսերը, որոնք անհրաժեշտ են ոռոգման համակարգի պահպանման և համալրման համար: Նաշվի առնելով, որ այդպիսի ծախսերի ֆինանսավորման աղբյուր են նաև մաշվածության գումարները, անհրաժեշտ հասույթի հաշվարկում մաշվածության և շահույթի փոխարեն ընդգրկվում են հետևյալ մեծությունները՝

ա) Նանձնաժողովի հետ համաձայնեցված փոխառու միջոցների սպասարկման (տրոկոսավճարներ) – մարման ծախսերը, որոնք որոշվում են Ընկերության առկա պարտքերի սպասարկման – մարման ժամանակացույցից,

բ) փոխառու միջոցներով և շահագործման ծախսերով չֆինանսավորվող քարեկան կապիտալ ծախսերը, որոնք Ընկերությունը կատարում է հիմնական միջոցների համալրման համար՝ Ծառայությունների անխափանությունն ապահովելու նպատակով, – որի ֆինանսավորումը պետք է իրականացվի փվյալ փարվա հասույթից:

Նշված ծախսերը ներառվում են անհրաժեշտ հասույթի կազմում՝ Նանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումային ծրագրերում նախատեսված չափերով:

2.8 Այլ եկամուտները ներառում են Ծառայությունների մատուցման համար ներգրավված ակտիվների այլ նպատակներով օգտագործումից (օտարումից) ստացվող լրացուցիչ հասույթների և դրանց պարճառով առաջացող լրացուցիչ ծախսերի փարքերությունը:

2.9 Անհրաժեշտ հասույթի հաշվարկում ընդգրկված ծախսերի որոշման համար հիմք են հանդիսանում հաշվարկային փարվան նախորդող 12-ամսյա ժամանակաշրջանում Ծառայությունների մատուցման համար Ընկերության կողմից կատարված փաստացի ծախսերը, որոնց վերաբերյալ գոյություն ունի սպառիչ տեղեկատվություն:

Նշված փաստացի ծախսերը ճշգրտվում են՝ հաշվի առնելով սակագնային հայտի ներկայացման պահին արդեն հայտնի և նոր սակագնի գործողության ընթացքում կանխատեսվող ողջամիտ փոփոխությունները:

3. Ծախսերի վերլուծություն – Ծառայությունների արժեքի որոշում

3.1 Սակագնային համակարգի մշակման հաջորդ փուլը ծախսերի վերլուծությունն է, որի միջոցով իրականացվում է ընդհանուր ծախսերի բաշխումը բոլոր սպառողական խմբերի միջև:

Ծախսերի վերլուծությունը բաղկացած է հետևյալ քայլերից՝

ա) ծախսերի փարանջատում ըստ գեոգրաֆիկականային բաժանումների,

բ) սպառողների խմբավորում,

գ) ծախսերի դասակարգում:

3.2 Ծախսերի վերլուծության համար Ընկերությունն իր կողմից սպասարկվող քարածքը բաժանում է ըստ գերավազանների (մասնաճյուղերի):

3.3 Սպառողների խմբավորումն իրականացվում է այնպես, որ նույն խմբում ընդգրկվեն սպառողներ, որոնց սպասարկումը գրեթե նման ծախսային բեռնվածք է սպեղծում Ընկերության համար: Սպառողները բաժանվում են երկու խմբի՝

ա) ինքնահոս եղանակով սպասարկվող սպառողներ,

բ) մեխանիկական եղանակով սպասարկվող սպառողներ:

3.4 Ծառայությունների մատուցման համար Ընկերության կողմից իրականացվող ընդհանուր ծախսերը դասակարգվում են երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի:

Ուղղակի են այն ծախսերը (**Ծու**), որոնք հնարավոր է անմիջականորեն վերագրել ավյալ գերավազանի սպառողների յուրաքանչյուր խմբին Ծառայություններ մատուցելու համար կատարված ծախսերին:

Ինքնահոս եղանակով սպասարկվող սպառողների համար դրանք հիմնականում ջրառի, ջրափարների և այլ հիդրոտեխնիկական կառուցվածքների (մինչև բաժանարար հանգույց) շահագործման – պահպանման ծախսերն են:

Մեխանիկական եղանակով սպասարկվող սպառողների համար ուղղակի ծախսերն են պոմպային ջրհան կայանների, մղման խողովակաշարերի, ջրավազանների և այլ հիդրոտեխնիկական կառուցվածքների (մինչև բաժանարար հանգույց) շահագործման և պահպանման ծախսերը, այդ թվում՝ էլեկտրական էներգիայի:

3.5 Անուղղակի ծախսերը (**Ծա**) կապված են միաժամանակ մի քանի կամ բոլոր գերավազանների հետ, և քանի որ դրանք հնարավոր չէ ուղղակիորեն վերագրել որևէ գերավազանի, ապա յուրաքանչյուր գերավազանի անուղղակի ծախսերի հատուցվող մասնաբաժինը որոշվում է այդ գերավազանից մատակարարված ջրի ծավալով՝

$$k_i = \frac{V_i}{\sum_{i=1}^n V_i},$$

որտեղ՝ n - գերավազանների քանակն է,

k_i - i -րդ գերավազանի անուղղակի ծախսերի բաշխման գործակիցն է,

V_i - i -րդ գերավազանից մատակարարված ջրի ծավալն է:

Այսպիսով, i -րդ գերավազանի անուղղակի ծախսերի հատուցվող մասնաբաժինը կլինի՝

$$\text{Ծ}_{\text{ու}i} = k_i * \text{Ծ}_{\text{ու}}:$$

3.6 Յուրաքանչյուր գեպրավազանի անուղղակի ծախսերի հապուցվող մասնաբաժինը բաշխվում է փվյալ գեպրավազանի ինքնահոս (σ_{wi}^h) – մեխանիկական (σ_{wi}^u) եղանակներով սպասարկվող սպառողական խմբերի միջև՝

$$\begin{aligned}\sigma_{wi}^h &= q_i^h * \sigma_{wi}, \\ \sigma_{wi}^u &= q_i^u * \sigma_{wi},\end{aligned}$$

որտեղ՝ $q_i^h - q_i^u$ - i-րդ գեպրավազանի համապարասխանաբար ինքնահոս և մեխանիկական եղանակներով սպասարկվող սպառողական խմբերի անուղղակի ծախսերի բաշխման գործակիցներն են, որոնք որոշվում են հետևյալ բանաձևերով՝

$$\begin{aligned}q_i^h &= \frac{V_i^h}{V_i}, \\ q_i^u &= \frac{V_i^u}{V_i},\end{aligned}$$

որտեղ՝

$V_i^h - V_i^u$ - i-րդ գեպրավազանից համապարասխանաբար ինքնահոս և մեխանիկական եղանակներով սպասարկվող սպառողներին մարակարարված ջրի ծավալներն են:

4. Սակագների մշակումը

Յուրաքանչյուր գեպրավազանի ինքնահոս և մեխանիկական եղանակներով սպասարկվող սպառողական խմբերի սակագնային դրույքները համապարասխանաբար որոշվում են հետևյալ բանաձևերով՝

$$\begin{aligned}U_i^h &= \frac{\sigma_{ni}^h + \sigma_{wi}^h}{\Omega \sigma_i^h}, \\ U_i^u &= \frac{\sigma_{ni}^u + \sigma_{wi}^u}{\Omega \sigma_i^u},\end{aligned}$$

որտեղ՝

$\sigma_{ni}^h - \sigma_{ni}^u$ - i-րդ գեպրավազանի համապարասխանաբար ինքնահոս և մեխանիկական եղանակներով սպասարկվող սպառողական խմբերի կողմից հապուցվող ուղղակի ծախսերի մասնաբաժիններն են,

$\sigma_{wi}^h - \sigma_{wi}^u$ - i-րդ գեպրավազանի համապարասխանաբար ինքնահոս և մեխանիկական եղանակներով սպասարկվող սպառողական խմբերի կողմից հապուցվող անուղղակի ծախսերի մասնաբաժիններն են,

$\Omega \sigma_i^h - \Omega \sigma_i^u$ - i-րդ գեպրավազանի համապարասխանաբար ինքնահոս և մեխանիկական եղանակներով սպասարկվող սպառողական խմբերի կողմից փարվա ընթացքում ծախսվող ոռոգման ջրի ծավալն են: